ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԱՆՐԻ ԲԱՐԲԻԻ ԿՈՂՄԻՑ

Վարուժան Պողոսեան

Ֆրանսիացի լրագրող Անրի Բարբիի «Սարսափի երկրում: Նահատակ Հայաստանը» գիրքն[1] ուրոյն տեղ ունի 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի պատմութեան սկզբնաղբիւրների թւում: Իբրեւ «ժուրնալ» թերթի զինուորական թղթակից՝ 1916 թ. նա այցելել է Անդրկովկաս եւ Արեւմտեան Հայաստան, եղել իրադարձութիւնների ականատեսը: Ի դէպ, նոյն կարգավիճակով 1912-1913 թթ. Բարբին հետեւել է բալկանեան պատերազմների ընթացքին իսկ 1918 թ. կրկին վերադարձել Անդրկովկաս, եղել նաեւ Պարսկաստանում, ինչի արդիւնքում, մասնաւորապէս՝ Հայաստանում եւ Բաքւում 1918 թ. ծաւալուած իրադարձութիւններին նուիրել է առանձին գիրք:[2]

Ըստ Բարբիի վկայութեան՝ 1916 թ. մարտին ինքը Թիֆլիսից գնացքով մեկնել է Սարիղամիշ, իսկ այնտեղից՝ արդէն դժուարանցանելի ճանապարհներով միայն հինգ օր անց հասել Էրզրում:[3] Նրա այցելութիւններն Արեւմտեան Հայաստանի քաղաքներ պայմանաւորուած են եղել գլխաւորապէս ռուսական զօրքերի առաջխաղացմամբ եւ տեղաշարժերով, ինչը նրան հնարաւորութիւն է ընձեռել տարբեր բնակավայրերում ճշգրտել ցեղասպանութեան ականատեսների զանազան վկայութիւնների հաւաստիութիւնը դրանց համադրման միջոցով:[4] 1916 թ. մարտ-օգոստոս ամիսներին տարբեր քաղաքներում (Էրզրում, Տրապիզոն, Երզնկա, Վան, Թիֆլիս) Բարբին մանրամասն զրոյցներ է ունեցել եղեռնի այլազգի (այդ թւում՝ քուրդ) եւ հայ ականատեսների հետ ու նրանցից ստացել հաւաստի տեղեկութիւններ: Նա օգտագործել է յատկապէս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին չեզոք պետութիւնների (Իտալիա, ԱՄՆ. վերջինս պատերազմի մէջ է ընդգրկուել միայն 1917 թ. ապրիլին)՝ Օսմանեան կայսրութիւնում հաւատարմագրուած դիւանագէտների, Թուրքիայի դաշնակից Գերմանիայի քաղաքացիների, մասնաւորապէս՝ Կարմիր խաչի բուժքոյրերի, տեղահանութիւններից հրաշքով փրկուած՝ Թիֆլիսում ծուարած հայ որբերի, Միջագետքի անապատներում ճանապարհորդած ականատեսների վկայութիւնները: Ըստ այդմ՝ Արեւմտեան Հայաստանում եւ մասամբ նաեւ Միջագետքի անապատներում ծաւալուած իրադարձութիւններին նուիրուած Բարբիի գրքի աղբիւրագիտական յենքը հարուստ է եւ բազմազան, իսկ տեղեկութիւններն՝ արժանահաւատ:

Մեծ եղեռնին առնչուող խնդիրները Բարբին քննարկում է հայ ժողովրդի անցած ուղու յետնախորքի վրայ, օսմանեան բռնակալութեան ներքոյ վաղուց ի վեր հեծող Արեւմտեան Հայաստանի պատմութիւնը բնորոշում՝ իբրեւ «երկարատեւ ու ողբերգական նահատակութիւն»[5], ինչը կարելի է համարել նրա դիրքորոշման անկիւնաքարը:

Հայ ժողովրդի պատմական անցեալին առնչուող համառօտ ակնարկում թէպէտ Բարբին յիշատակում է տարբեր ասպատակիչների, Հայաստանին տիրելու համար մղած պայքարի մասին, սակայն անտեսում է հայ ժողովրդի կեանքում ճակատագրական նշանակութիւն ունեցած ԺԶ դարում Հայաստանի մեծ մասի ռազմակալումը Թուրքերի կողմից: Այդուհանդերձ, նա հպանցիկ ակնարկում է Հայաստանի բռնագրաւման մասին՝ մատնանշելով դարեր ի վեր օսմանեան լծի ներքոյ հեծող արեւմտահայութեան թշուառ վիճակն «այն երկրում, որը եղել է իրենց (ընդգծումը հեղինակինն է - Վ. Պ.) երկիրը»[6]:

Ըմբռնելով ԺԹ դարի վերջին եւ Ի դարի սկզբին հայ ժողովրդի հանդէպ օսմանեան պետութեան կիրառած ցեղասպան քաղաքականութեան ակունքները՝ Բարբին հայ ժողովրդի բնաջնջման գործընթացի վրայ նետում է յետադարձ հայեացք եւ ջանում այն քննարկել իր ամբողջութեան մէջ, ինչն ինքնին ողջամիտ մօտեցում է: Հայոց ցեղասպանութեան նախակարապետ եւ մտայղացող նա իրաւամբ համարում է Աբդուլ Համիդ II-ին, որը 1878 թ. յետոյ, ի շարս այլ հանգամանքների (Արեւմտեան Հայաստանի եւ Ռուսաստանի հարեւանութիւնը, որտեղ բնակուող հայերի վիճակն անհամեմատ բարւոք էր, բալկանեան ժողովուրդների օրինակով օսմանեան լծի թողուրդների միտուած ազատագրական թափմանը միտուած ազատագրական շարժման զարգացման հեռանկարը), ահաբեկուած, մասնաւորապէս Եւրոպայի՝ Օսմանեան կայսրութեան ներքին գործերին նոր միջամտութեան հեռանկարից, «վայրենի ազամաբանութեամբ» վճռել է ոչնչացնել, ըստ իր հոգեբանութեան եւ համոզման, վտանգաւոր թուացող տարրին:[7]

Ընդհանուր առմամբ, իրատեսական համարելով հարցի նման մեկնաբանութիւնը՝ հարկ է, այդուհանդերձ, ելնելով Բարբիի շարադրանքից՝ հաւաստել, որ Հայոց ցեղասպանութեան պատճառների՝ նրա վերլուծութիւնը սպառիչ չէ, քանզի հեղինակը շրջանցում է Հայկական հարցի գոյութեան իսկ փաստը: Այլ խօսքերով՝ նա ամբողջութեամբ չի ըմբռնել ցեղասպանութեան կեանքի կոչման գերխնդրին՝ օսմանեան գահակալի առջեւ ծառացած Հայկական հարցին, թուրքական եղանակով լուծում տալու էութիւնը: Այնուամենայնիւ, Բարբին անդրադառնում է 1877-1878 թթ. պատերազմին յաջորդած ժամանակաշրջանում դիւանագիտական բանակցութիւններում դիրքերի ընթացքում արեւմտահայութեան կարի ընթացքում արեւմտահայութեան կացութեան բարելաւման հետ կապուած քննարկումներին եւ քննադատական խօսքեր ուղղում մեծ տէրութիւնների հասցէին, որոնք ոչինչ չեն ձեռնարկել հայ ժողովրդի հանդէպ ստանձնած «հանդիսաւոր պարտականութիւններն» ի կատար ածելու ուղղութեամբ:[8]

Հայոց ցեղասպանութեան գործընթացի վերլուծութեան հարցում Բարբիի հայեցակարգը, ըստ որի՝ այն հարկ է դիտել՝ իբրեւ շարունակական բնոյթ կրող իրադարձութիւն, ընդունելի է: Միանգամայն իրաւ-

---

1 **H. Barby**, *Au pays de l'épouvante. L'Arménie martyre*. Préface de M. Paul Deschanel, Paris, 1917. Տե՛ս նաեւ հայերէն եւ ռուսերէն թարգմանութիւնները՝ **Հ. Բարբի**, *Սարսափի երկրին մէջ: Նահատակ Հայաստան*, թարգմանիչ՝ Միքայէլ Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919; **А. Барби**, *В стране ужаса. Мученица Армения*, Тифлис, 1919. Գրքի որոշ հատուածներ զետեղուել են նաեւ «Հայերի ցեղասպանութիւնն Օսմանեան կայսրութիւնում» փաստաթղթերի ժողովածուում: Տե՛ս *Геноцид армян в Османской империи*. Сборник документов и материалов. Составители **М. Г. Нерсисян, Р. Г. Саакян**. Под редакцией **М. Г. Нерсисяна**, второе, дополненное издание, Ер., 1982, с. 455-471. Մեր նախորդներից Բարբիի գրքին հպանցիկ անդրադարձել է միայն Արամայիս Մնացականեանը, որը սահմանափակուել է սոսկ նրա որոշ նկարագրութիւնների վերաշարադրմամբ եւ գրքի ենթագլուխների թուարկմամբ. տե՛ս **Ա. Ն. Մնացականեան**, *Հայ ժողովրդի ողբերգութիւնը ռուս եւ համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ*, Եր., 1965, էջ 142-144:

2 **H. Barby**, *La débacle russe. Les extravagances bolchéviques et l'épopée arménienne*, Paris, s. d.

3 **H. Barby**, *Au pays de l'épouvante*, p. 19-20.

4 Այդ մասին տե՛ս նոյն տեղում, էջ 43, 55, 99, 127:

5 Նոյն տեղում, էջ 6, 114

6 Նոյն տեղում, էջ 112

7 Նոյն տեղում, էջ 7-9

8 Նոյն տեղում, էջ 7

© National Library of Armenia

ւամբ նա առանձնայատուկ ուշադրութիւն է դարձնում այն հարցին, որ իշխանութեան գալուց յետոյ երիտթուրքերը սոսկ շարունակել են կենսագործել իրենց կողմից գահընկեց արուած Աբդուլ Համիդ II-ի մտայղացած՝ հայերի բնաջնջման ծրագիրը,[9] ինչի մասին վկայում են 1909 թ. Ադանայի կոտորածները: Սակայն ինչն աւելի կարեւոր է, մեր կարծիքով, Բարբիի կողմից Հայոց ցեղասպանութեան գործընթացի շարունակական բնոյթի ընդգծումն է համիդեան «սարսափելի վարչակարգին» յաջորդած երիտթուրքական իշխանութեան օրօք՝ մինչ 1915 թ. լայնածաւալ կոտորածների եւ տեղահանութիւնների սանձազերծումը: Արձանագրելով հայերի հանդէպ գործադրուած զանազան բռնութիւններ (յանցանքներ, սպանութիւններ)՝ Բարբին փաստում է երիտթուրքերի կողմից ցեղասպանութեան իրականացման տարբեր եղանակների որդեգրման ու կիրառման հանգամանքը, ինչն, ի դէպ, բնորոշէր նաեւ նրանց նախորդին, եւ ըստ այդմ՝ գործընթացի յարատեւութիւնը:[10] Թէեւ նա ձեռնպահ է մնում դիտել օսմանեան տարբեր վարչակարգերի կողմից հայ ժողովրդի ոչնչացումն՝ իբրեւ միասնական գործընթաց, ինչն անյարիր է ցեղասպանագէտների մի մասի առաջադրած, մեր համոզմամբ, աւելի ընդունելի հայեցակարգին,[11] այդուհանդերձ, հայերից ձերբազատումը համարում է օսմանեան ղեկավարների վաղուց ի վեր փափագած երազանքը:

Ուստի երիտթուրքերի իրականացրած լայնածաւալ հայկական կոտորածները Բարբին չի պայմանաւորում Առաջին համաշխարհային պատերազմի բռնկմամբ, իսկ փոխարէնն իրաւամբ հաւաստում է, որ Կոստանդնուպոլսի իշխանութիւնների կողմից հայերի ոչնչացման «թոյլատրումը, իսկ աւելի յաճախ կազմակերպումը», երբեւէ առնչութիւն չի ունեցել որեւիցէ պատերազմական գործողութիւնների մէջ Թուրքիայի ընդգրկուելու հետ:[12] Նման դիրքորոշումը Բարբիի մեծ արժանիքներից է:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է յիշատակել նաեւ հայերի բնաջնջման պատճառներին՝ Բարբիի տուած մէկ այլ գնահատականի մասին, որն անյարիր է նշուած իրատեսական մեկնաբանութիւններին: Որքան տարօրինակ է, բայց անդրադառնալով այս խնդրին եւս մէկ անգամ՝ նա Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Կովկասում Թուրքերի կրած իւրաքանչիւր պարտութեանը յաջորդած՝ հայերի հանդէպ գործադրուած կոտորածների «բուն պատճառը» մեկնաբանում է սոսկ երկրորդական բնոյթի մի հանգամանքով, այն է՝ «Հայաստանն Արեւելքում ներկայացնում է արեւմտեան քաղաքակրթութիւնը»[13]:

Հայոց ցեղասպանութեան պատճառների վերլուծութեան հարցում Բարբիի իսկ դիրքորոշմանը հակասող նման հետեւութիւնը կարելի է, հաւանաբար, բացատրել օսմանեան հասարակութիւնում հայերի զբաղեցրած դիրքին եւ տեղին տուած նրա

9 Նոյն տեղում, էջ 13

10 Նոյն տեղում, էջ 14

11 Տե՛ս, օրինակ, **Moussa Prince**, *Un génocide impuni*. L'arménocide, Beyrouth, 1975, p. 97-114, 147-242, 345-376; **Ю.Г.Барсегов**, *Геноцид армян — преступление по международному праву*, М., 2000, с. 17-22; **I. L. Horowitz**, *Taking Lives. Genocide and State Power*. Fifth Edition, Revised, New Brunswick & London, 2002, p. 157-158. Այս տեսակէտի կողմնակիցների թւում է նաեւ ժամանակակից խոշոր ցեղասպանագէտ Եհուդա Բաուերը (Իսրայէլ), որն իր կարծիքն այս հարցի շուրջ յայտնեց 2005 թ. ապրիլի 20-21-ին Երեւանում գումարուած «Ծանրագոյն յանցանք՝ ծայրագոյն մարտահրաւէր. ցեղասպանութիւնն ու մարդու իրաւունքները» միջազգային համաժողովին ներկայացրած՝ «Անցեալ ցեղասպանութիւնների դասերը՝ որպէս ապագայ ցեղասպանութիւնները կանխելու ուղեցոյց» զեկուցումում:

12 **H. Barby**, նշ. աշխ., էջ 5

13 Նոյն տեղում, էջ 214

բարձր գնահատականներով: Զանազան ոլորտներում (առեւտրի, արհեստների, արդիւնաբերութեան, արուեստի, գիտութեան) ծաւալած գործունէութեան առնչութեամբ նա պարբերաբար կարեւորում է հայերի բարձր ունակութիւններն ու արժանիքները: Ընդհանուր առմամբ, հայ ժողովրդի մասին Բարբին յայտնում է ամենաբարձր կարծիքը: Նկատի ունենալով նրա ինտելեկտուալ ներուժը՝ նա նոյնիսկ շեշտում է, որ թէ՛ կրթական եւ թէ՛ մշակութային մակարդակով հայերը ոչնչով չեն զիջում եւրոպական ժողովուրդներին եւ այդ առումով «գերազանցում են Թուրքերին, նոյնիսկ նրանց ունեւոր դասակարգին»[14]: Իրականութեանն ամբողջութեամբ համապատասխանող այն բազմապիսի փաստերը, որոնք նա յղում է այս կապակցութեամբ,[15] ոչնչով չեն հիմնաւորում, սակայն, ոչ այնքան համոզիչ այն հետեւութիւնը, որին նա յանգում է, առաւել եւս, ցեղասպանութեան պատճառների՝ նրա իսկ ուրուագծած յետնախորքի վրայ:

Բարբիի շարադրանքը յագեցուած է Մեծ եղեռնի ընթացքում երիտթուրքական կառավարութեան ղեկավար դերը մերկացնող հաւաստի փաստերով,[16] որոնք բացայայտում են ցեղասպանութեան իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով: «Մի ամբողջ քրիստոնեայ ժողովրդի պարբերական ոչնչացումը Թուրքական կառավարութեան ... ոճիրն է»,— այսպիսին է նրա հիմնական եզրայանգումներից մէկը,[17] ինչը Բարբին հիմնաւորում է բազմիցս՝ վկայակոչելով տարբեր տարածաշրջաններում արձանագրուած այլեւայլ փաստեր:

Ծանրութեան կենտրոնը տեղափոխելով իր այցելած վիլայեթների օրինակի վրայ՝ Բարբին ոչ միայն մանրամասնում է Էրզրումի հայ բնակչութեան կոտորածներին առնչուող հանգամանքները, այլեւ, համադրելով տարբեր տարածաշրջաններից ստացուած վկայութիւնները եւ անձնական դիտարկումները, հաւաստում, որ հայկական բոլոր վիլայեթների հայ բնակչութիւնն ենթարկուել է միեւնոյն ճակատագրին, ինչ Էրզրումի հայութիւնը: Հիմնուելով Էրզրումում ամերիկեան հիւպատոս, իրաւարքութիւնների ականատես Սթափլթոնի (Stapleton) տեղեկութիւնների վրայ՝ Բարբին բացայայտում է Էրզրումի հայերի կոտորածի եւ տեղահանութեան (որոնց հետեւանքով, ինչպէս նա նշում է, 18000 հայից կենդանի են մնացել միայն 120-ը)[18] գլխաւոր պատասխանատուներին, մասնաւորապէս՝ տեղական բարձրաստիճան պետական պաշտօնեաներ՝ Թուրքական զօրքերի հրամանատար Քեմալ փաշային, քաղաքի ոստիկանապետին, օսմանեան խորհրդարանի պատգամաւոր, ՄԱԿ-ի անդամ Սէյֆուլլահին[19] եւ շատ աւելի ականաւոր դարձնում օսմանեան վարչակարգի չարագուշակ դերը:

Միեւնոյն վերլուծական վերաբերմունքն է նա ցուցաբերում Տրապիզոնում տեղի ունեցած հայկական կոտորածների առնչութեամբ: Այս պարագայում եւս, անտեսելով սոսկ իրաւարքութիւնների նկարագրութեամբ եւ քաղաքի 14000 հայի ոչնչացման փաստմամբ, որոնցից, ըստ նրա՝ փրկուել են միայն երկու ընտանիք եւ տասնչորս կին, նա պատասխանատուութիւնը բարդում է գլխաւորապէս քաղաքում ՄԱԿ-ի նախագահ Նայիլ բէյի վրայ:[20]

Պետական քաղաքականութեան անսքող բացայայտմանն են միտուած նաեւ

14 Նոյն տեղում, էջ 60

15 Նոյն տեղում, էջ 217-218

16 Նոյն տեղում, էջ 55-56, 81, 100, 115 եւ այլն

17 Նոյն տեղում, էջ 55

18 Նոյն տեղում, էջ 28

19 Նոյն տեղում, էջ 34

20 Նոյն տեղում, էջ 53

© National Library of Armenia

Բարբիի այլ հաւաստումներ: Նա թուցիկ նշում է 1915 թ. ապրիլի 24-ին հայ մտաւորականների՝ «պատգամաւորների, պրոֆեսորների, բժիշկների, դերասանների, գրական գործիչների» կալանքի մասին եւ այն հիմնաւորում «նրանց ձայնը լռեցնելու» անհրաժեշտութեամբ:[21] Ի դէպ, այս իրադարձութիւնը հեղինակը պատճառաբանում է միայն ձերբակալուածների հայկական ծագմամբ եւ դրանով իսկ ակնառու դարձնում, որ տուեալ իրադարձութիւնը չի կարող դիտուել՝ իբրեւ փոլիթիսայդ (politicide), որով ժամանակակից ցեղասպանագէտները (Ի. Զառնի, Ռ. Ռումմել, Թ. Գուրր, Բ. Հարֆ)[22] բնորոշում են լոկ քաղաքական պատկանելիութեան հողի վրայ տեղի ունեցած զանգուածային բռնութիւններ (օրինակ՝ քաղաքական ախոյեանների ոչնչացումը Ֆրանսիայում յակոբինեան դիկտատուրայի օրօք կամ ԽՍՀՄ-ում՝ ստալինեան ժամանակաշրջանում):

Նոյն՝ պետական քաղաքականութեան մերկացմամբ է կարելի մեկնաբանել Բարբիի արձանագրած մի քանի փաստեր եւս: Դրանք են՝ 1915 թ. ապրիլից ի վեր իշխանութիւնների կողմից ամբողջ հայ բնակչութեան զինաթափումը եւ մահմեդականների զինումը, քրդական հրոսակախմբերի կազմակերպումը, չարագործների ազատ արձակումը բանտերից (նրանցից «չեթեներ» ձեւաւորելու համար):[23]

Հեղինակը յատուկ նշանակութիւն է տալիս նաեւ պատերազմական գործողութիւնների սանձազերծումից ի վեր հայ զինուորներին զինծառայութիւնից ազատելու եւ թիկունքում շինարարական աշխատանքներում օգտագործելու հանգամանքին, ինչպէս նաեւ «մոլեռանդ հրահրիչների»՝ թուրք բնակչութեան շրջանում ծաւալած գործունէութեանը, բանակում հայերի հանդէպ «վատթարագոյն վերաբերմունք» սերմանելու նպատակով, ինչը կը յանգեցնէր, անտարակոյս, վերջիններիս բողոքին եւ առիթ կը ծառայէր նրանց բոլորին բնաջնջելու համար:[24]

Պետական քաղաքականութեան մակարդակով հայերի ոչնչացման յենքի վրայ է հեղինակը քննարկում նաեւ լայնածաւալ տեղահանութիւնների խնդիրը: Այս հարցում, սակայն, նա թոյլ է տալիս երկու անճշտութիւն՝ հայերի տեղահանութիւնների իրականացումն առնչելով «1915 թ. մայիսի 20-ի (յունիսի 2-ի) հրեշաւոր դեկրետին», որով Էնվերը «երիտթուրքական կոմիտէի անունից կարգադրել է Հայաստանի, Անատոլիայի եւ Կիլիկիայի վիլայեթներից բոլոր հայերի տեղահանութիւնն արաբական անապատներ»[25]: Բարբին վրիպել է ոչ միայն 1915 թ. մայիսի 14/27-ի տեղահանութեանը վերաբերող օրէնքի ամսաթուի հարցում, այլեւ այն վերագրել է միայն Էնվերին այն դէպքում, երբ օրէնքը հաստատուել է նախարարների խորհրդում:[26]

21 Նոյն տեղում, էջ 56

22 Այդ մասին տե՛ս *Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides.* Sous la direction de **Israel Charny**, Toulouse, 2001, p. 37, 42, 48.

23 **H. Barby**, նշ. աշխ., էջ 56-57

24 Նոյն տեղում, էջ 21

25 Նոյն տեղում, էջ 57

26 Այդ մասին տե՛ս **V. Dadrian**, *Histoire du génocide arménien.* Conflits nationaux des Balkans au Caucase, Paris, 1996, p. 362; **Ա. Պէյլերեան**, Ներածութիւն.– *Մեծ տէրութիւնները. Օսմանեան կայսրութիւնը եւ հայերը ֆրանսիական արխիւներում (1914-1918)*, հտ. I: Փաստաթղթերի ժողովածու, աշխ. **Արթուր Պէյլերեանի**, ֆրանսերէնից թարգմանեց **Վարուժան Պողոսեանը**, Եր., 2005, էջ 43: Տեղահանութեան օրէնքի ընդունման հանգամանքների մասին մանրամասն տե՛ս **R. H. Kévorkian**, *Le génocide des Arméniens*, Paris, 2006, p. 306-313. Ի դէպ, տեղահանութիւններին առնչուող օրէնքի ամսաթուի հարցում նոյն անճշտութիւնն են թոյլ տուել նաեւ Բարբիի ժամանակակից ֆրանսիացի այլ պատմաբաններ, որոնք, սակայն, ի տարբերութիւն նրա՝ դրա ընդունումը վերագրել են երիտթուր-

Շրջանցելով տեղահանութեան ընթացքում հայ ժողովրդի կրած տառապանքների՝ Բարբիի նկարագրութիւնների թուարկումը՝ նշենք, որ այս հարցի շուրջ նրա մեկնաբանութիւնները, որոնց յանգել է տարբեր տարածաշրջաններում (Երզնկա, Մուշ, Էրզրում, Խարբերդ) արձանագրուած տեղահանութիւնների փորձի ուսումնասիրութեան հիման վրայ, խիստ արժէքաւոր են: Յաւուր պատշաճի ըմբռնելով Էրզրումի եւ շրջակայքի ամբողջ հայ բնակչութեան տեղահանութեան իմաստը, նա արժեւորում է դրա իրականացումը թուրքերի կողմից նախօրօք մշակուած ծրագրի հիման վրայ, որը յետապնդում էր միայն մէկ՝ բնակչութեանը բնակավայրից հեռացնելու միջոցով նրա կոտորածը դիւրին դարձնելու նպատակ:[27] Նա, այսպիսով, հերքում է երիտթուրքերի պարագլուխների՝ հայկական տեղահանութիւններն իբրեւ հայերի կարծեցեալ զանգուածային ապստամբութեանն ու մահմեդականների դէմ նրանց գործած վայրագութիւններին ի պատասխան կիրառուած հարկադրական միջոց մեկնաբանող մտացածին վարկածի հաւանականութիւնը:[28]

Սեբաստիայից (Սեբաստիա) Խարբերդ ձգուող ճանապարհին տեղահանուածների քարաւաններից մէկում ընդգրկուած հայերի նկատմամբ կիրառուած բռնութիւնների կապակցութեամբ Բարբին մատնանշում է, մասնաւորապէս թուրք սպաների կարգադրութեամբ իրականացուած տղամարդկանց համատարած սպանութեան իրողութիւնը այն դէպքում, երբ կանայք խնայուել են:[29] Նոյն փաստը նա արձանագրում է նաեւ Եփրատի հովտում ծուարած՝ տեղահանուած հայերի օրինակի հիման վրայ՝ մասնաւորապէս նշելով, որ մազապուրծ եղածները «բացառապէս կանայք են, ծերունիներ եւ երեխաներ»[30]: Դրանով նա աւելի ցցուն է դարձնում հայ ժողովրդի դէմ գործադրուած քաղաքականութեան ցեղասպան բնոյթը:

Ընդգծելով, որ տեղահանութեան գործընթացը «սկիզբ է առել մայրաքաղաքից ստացուած հրամանի հիման վրայ, որը պաստառուել է բոլոր քաղաքներում եւ գիւղերում»՝ Բարբին տեղահանութիւնը բնորոշում է, իբրեւ տարբեր փուլերից բաղկացած («կոտորած, քարաւան, անապատ»), հայ ժողովրդի բնաջնջման անքակտելի մաս, քանզի, ինչպէս իրաւամբ նշում է, տեղահանուածներից սոսկ ոմանց յաջողուել հրաշքով խոյս տալ մարդասպաններից:[31] Այս հետեւութեանը նա յանգել է, անտարակոյս, ոչ միայն ականատեսների հաղորդած տեղեկութիւնների, նաեւ Արեւմտեան Հայաստանի տարածքում ճանապարհորդութիւնների արդիւնքում ստացած անձնական տպաւորութիւնների հիման վրայ: Սեբաստիայից Խարբերդ ձգուող ճանապարհին 1915 թ. ամբերդ ձգուող ճանապարհին տեղի ունեցած կոտորածների արդիւնքում Բարբին 1916 թ. յուլիսին փաստում է զոհերի դանդերի առատութիւնը, ընդ որում, այնպիսի ահռելի քանակութեամբ, որ ճանապարհորդին հեռուից կարող էր թուալ, թէ «նկատում է հասած սերմերի անծայրածիր դաշտեր»[32]: Իսկ օգոստոսին արդէն Երզնկայի շրջակայքում նա դարձել է հազարաւոր մարդկային կմախքների ականատեսը. «Սրանք 1915 թ. յունիսին Էրզրումից, Խարբերդից, Բաբերդից եւ

քերի «Միութիւն եւ առաջադիմութիւն» կոմիտէին. տե՛ս **E. Doumergue**, *L'Arménie. Les massacres et la question d'Orient.* Conférence, Etudes et documents, Paris, 1916, p. 25; J. de Morgan, Sur les nationalités, Paris-Nancy, 1917, p. 92.

27 **H. Barby**, նշ. աշխ., էջ 23

28 Այդ մասին տե՛ս **Ա. Պէյլերեան**, նշ. աշխ., էջ 31-37:

29 **H. Barby**, նշ. աշխ., էջ 92-93

30 Նոյն տեղում, էջ 172

31 Նոյն տեղում, էջ 57, 63

32 Նոյն տեղում, էջ 93

© National Library of Armenia

այլ վայրերից Միջագետք, այսպէս ասած, տեղահանուելու համար արտաքսուածների մնացորդներն են,– գրում է նա,– որոնք շատ մեծ թուով կոտորուել են Երզնկայի մօտակայքում»[33]: Համանման տեղեկութիւններ է նա հաղորդում նաեւ Բիթլիսի տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձութիւնների առնչութեամբ այնտեղ կատարած այցելութիւնից յետոյ:[34]

Անդրադառնալով տեղահանուած հայերի դժնի ճակատագրին՝ Բարբին Միջագետքի եւ Սիրիայի աւազոտ անապատներում («անիծեալ տեղանքում, որը դժոխք է»[35])՝ կիզիչ արեւի ճառագայթների տակ, սովից ու ծարաւից տառապող, հրոսակխմբերի եւ գիշատիչ գազանների զոհը դարձող մարդկանց խմբաւորումներն անուանում է «մահուան քարաւաններ». «Այսպիսին է այն ճշգրիտ բնորոշումը, որը համապատասխանում է առաջին կոտորածներից փրկուած տեղահանուածների խղճուկ ամբոխներին»[36]:

Միջագետք տեղահանուածների ճամբարներից մէկում հայերի համար առկայ սարսափելի պայմանների առիթով Բարբին, հիմնուելով թուրքական բանակի հայազգի բժշկից ստացուած տեղեկութիւնների վրայ, ստեղծուած անմխիթար կացութեան մեղաւորներ է համարում Թուրքիայի ղեկավարներին եւ նրանց մեղսակիցներին:[37]

Այսպէս, բազում փաստերով հիմնաւորելով երիտթուրքերի ղեկավար դերը, նա Հայոց Մեծ եղեռնը, որի արդիւնքում ոչնչացուել է «աւելի քան մէկ միլիոն մարդկային էակ, մի ամբողջ ժողովրդի կէսը», համարում է երիտթուրքական կառավարութեան «գործը, որն իշխանութիւնը գրաւելուց յետոյ քաղաքակիրթ Եւրոպայի կողմից ընդունուել է՝ իբրեւ մարդասիրութեան եւ առաջադիմութեան կառավարութիւն»[38]: Ինչպէս տեսնում ենք, ի վերջոյ, եղեռնի պատասխանատուութիւնը նա բարդում է երիտթուրքերի վարչակարգի վրայ եւ յանգում միակ հնարաւոր հետեւութեան. «Նրանք են ... որ յղացել են կոտորածը եւ հրահանգել դրա իրականացումը: Նրանք են, վայրենի քրդերին եւ, հնարաւորութեան սահմաններում, ամէնուր մահմեդականների կրօնական մոլեռանդութիւնը գրգռելով, նրանց դրդել սպանութիւնների»[39]:

Փոխարէնը, Բարբին դրսեւորում է անկողմնակալ վերաբերմունք սակաւաթիւ թուրք պաշտօնեաների՝ հայերի հանդէպ ցուցաբերած գթասիրտ վերաբերմունքի վերհանման հարցում, որոնք, ինչպէս նրանց նախորդներից ոմանք 1890-ական թթ. եւ 1909 թ. կիլիկեան կոտորածների ժամանակ, օգնութեան ձեռք են մեկնել հայերին: Նա յիշատակում է Էրզրումի վալիի մասին, որը տեղահանութեան դատապարտուած հայերին օգնելու համար արել է ամէն ինչ՝ նրանց, մասնաւորապէս հնարաւորութիւն ընձեռելով ձեռք բերել տրանսպորտի միջոցներ (սայլեր, կառքեր): Բացի դրանից, Բարբին հպանցիկ յիշատակում է նաեւ քաղաքի «օսմանեան բնակչութեան մի մասի»՝ հայերի նկատմամբ դրսեւորած մարդասիրական վերաբերմունքի մասին:[40] Ըստ նրա մէկ այլ վկայութեան՝ Տրապիզոնում տեղի ունեցած ահարկու անցքերը վրդովեցրել են մահմեդական բնակչութեան մի մասին եւ անգամ սարսափ ազդել նրա վրայ, որն «առաջին օրերին ջանացել է փրկել մի քանի զոհերի»: Նա յիշատակում է նաեւ քաղաքի թուրք բնակիչներից մէկի՝ Էշադիր օղլու մասին, որը զէնքը ձեռքին փորձել է դիմակայել հրոսակներին, սակայն զոհուել է մի քանի հայերի հետ մէկտեղ:[41]

33 Նոյն տեղում, էջ 100

34 Նոյն տեղում, էջ 94

35 Նոյն տեղում, էջ 163

36 Նոյն տեղում, էջ 63

37 Նոյն տեղում, էջ 164

38 Նոյն տեղում, էջ 205: Ինչ վերաբերում է զոհերի թուաքանակին, հարկ է նկատի ունենալ, որ Բարբին ստոյգ տուեալներ ունենալ դեռեւս չէր կարող, քանզի գիրքը գրելու ժամանակ (1916 թ.), ցեղասպանութեան գործընթացն ընթացքի մէջ էր:

39 Նոյն տեղում, էջ 207

40 Նոյն տեղում, էջ 31, 34

Բարբին արժեւորում է նաեւ տարբեր այլազգիների, յատկապէս՝ որոշ քրդերի եւ յոյների՝ հայերին ցուցաբերած օգնութիւնը:[42] Յատկանշական է Բիթլիսի տարածաշրջանում արձանագրուած տեղի քուրդ աշիրեթների կողմից՝ կոտորածներից մազապուրծ հայերին (շուրջ 300 ընտանիքի) տասնմէկ ամիս լեռներում ապաստանելու եւ նոյնիսկ գրոհող թուրք եւ քուրդ ելուզակներից նրանց պաշտպանելուն վերաբերող փաստը, ինչի համար հիմք է ծառայել հայերի՝ ռուսական զօրքերի հրամանատարութեանը յղած՝ 1916 թ. ապրիլի 11/24-ի նամակը:[43]

Սակայն անկախ թէ՛ սակաւաթիւ թուրք պաշտօնեաների ու շարքային քաղաքացիների եւ թէ՛ այլազգիների ցուցաբերած օգնութեան հանգամանքներից, արեւմտահայութիւնն, այդուհանդերձ, պաւիւնել է գլխաւորապէս իր ուժերին՝ դիմելով ինքնապաշտպանութեան, ինչը 1915 թ. խարսխուել է աւելի ամուր հիմքերի վրայ եւ ծաւալուել շատ աւելի ընդարձակ տարածաշրջաններում,[44] քան 1890-ական թթ.: Համառօտակի յիշատակելով տարբեր քաղաքներում (Շապին-Գարահիսար, Ուրֆա, Զուրք Մարզպան) կազմակերպուած ինքնապաշտպանութեան մասին՝ Բարբին հանգամանօրէն նկարագրում է յաջողութեամբ պսակուած Մուսա լեռան եւ Վանի հերոսամարտերը: Թափանցելով զանազան մանրամասների մէջ՝ նա ուրուագծում է 1915 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Մուսա լեռան «հերոսական դիմադրութեան», ընդհանուր առմամբ, հաւաստի պատկերը, որի պատճառը եղել է հայերի՝ Միջագետք արտաքսուելուն առնչուող կարգադրութիւնը:[45]

Շատ աւելի ծաւալուն են Բարբիի՝ 1915 թ. ապրիլ-մայիսին Վանի ինքնապաշտպանութեան նկարագրութիւնները, որի մասին տեղեկութիւններ ստացել է Վանում՝ ռուսական բանակի հայ կամաւորներից: Դիմադրութեան ձեռնամուխ լինելու հայերի ցանկութիւնը Բարբին պատճառաբանում է թուրքական բանակում հայ զինուորների զինաթափմամբ եւ, ըստ Վանի վալի Ջեւդեթ բէյի կարգադրութեան, տասներկու հայ զինուորների սպանութեամբ: Միաժամանակ նա բացայայտում է Ջեւդեթի գործելամիջոցները, որոնք միտուած են եղել իրավիճակի շիրոնք միտուած են եղել իրավիճակի շիրկացմանը՝ արհեստականօրէն հայկական ապստամբութիւն հրահրելու եւ, իբրեւ դրա հետեւանք, հայերին կոտորելու հիմնաւոր պատճառ ունենալու մտադրութեամբ: Պատահական չէ, որ Բարբին փաստում է իրավիճակը խաղաղ եղանակով կարգաւորելու ուղղութեամբ հայ հոգեւոր եւ քաղաքական առաջնորդների ձեռնարկած քայլերը, որոնք, սակայն, արդիւնքի չեն յանգեցրել,[46] եւ քողազերծում է Վանում հայերի «խռովութեան» տեսակէտի կողմնակիցների կռուանները:

Առճակատման պատրուակ նա իրաւամբ համարում է հայ կանանց հանդէպ թուրք զինուորների գործադրած բռնութիւն

41 Նոյն տեղում, էջ 51, 52

42 Նոյն տեղում, էջ 52, 95-96

43 Նոյն տեղում, էջ 104-108

44 Այդ մասին տե՛ս **Ռ. Սահակեան**, *Արեւմտահայութեան ցեղասպանութիւնը եւ ինքնապաշտպանական կռիւները 1915 թուականին*, Եր., 2005, էջ 162-370. **Տ. Դեւրիկեան**, *Արեւմտահայութեան ինքնապաշտպանութիւնը*. 1915-1923, Եր., 2005, էջ 10-269:

45 **H. Barby**, նշ. աշխ., էջ 119-126

46 Նոյն տեղում, էջ 133

© National Library of Armenia

թիւնները:[47] Անուանելով հայերի դիմադրութիւնը հերոսական եւ հիասքանչ՝[48] Բարբին ընդգծում է յատկապէս հայերի՝ «ազգային գործին հաւատարիմ մնալու», այլ ոչ թէ նախայարձակ լինելու հանգամանքը:[49] Թէպէտ նա չի մանրամասնում Վանի ինքնապաշտպանութեան առանձնայատկութիւնը, որը յանգում էր քաղաքի երկու՝ միմեանցից մեծ հեռաւորութեան վրայ գտնուող հայկական թաղամասերում՝ Այգեստանում եւ Քաղաքամէջում՝ տարբեր ղեկավարների առաջնորդութեամբ եւ, փաստօրէն, միմեանցից անկախ ու ինքնուրոյն բնոյթ կրող դիմադրական պայքարի,[50] այդուհանդերձ, իր տեղեկատուութեան շրջանակներում հանգամանօրէն նկարագրում է Վանի հայութեան ինքնապաշտպանական մարտերը մինչ ռուսական զօրքերի ժամանումը[51]:

Էականը, սակայն, ոչ այնքան հեղինակի՝ հայերի ինքնապաշտպանութեան դրուագների նկարագրութիւններն են, որքան նրա մեկնաբանութիւնները: Բարբին հակադրւում է այն թիւր մտայնութեանը, ըստ որի՝ հայերը, ի տարբերութիւն բալկանեան ժողովուրդների, երբեւէ չեն դիմել ինքնապաշտպանութեան: Զբաւարարուելով հպանցիկ դիտարկումներով՝ նա ջանում է վերլուծել հայերի՝ արտաքուստ ոչ այնքան ակտիւ դիրքորոշման պատճառները:

Հայերի ինքնապաշտպանութեան մեկնաբանութեան հարցում Բարբին ծանրութեան կենտրոնը տեղափոխում է դարեր շարունակ օսմանեան բիրտ վարչակարգի ճիրաններում հեծող արեւմտահայերի կեանքի անելանելի պայմանների վերհանման հարթութիւն, ինչպիսիք են եղել «վատթար վերաբերմունքը, կողոպուտները, առեւանգումները, հրդեհները, արդարադատութեան բացակայութիւնը, սպանութիւնները, որոնցից ոչ մէկը նրանց չի շրջանցել»[52], եւ որոնք հայերին դրդել են դիմելու զէնքի: Այս հարցում, սակայն, նա արձանագրում է օսմանահպատակ հայերին բնորոշ երկու միտում, որոնք արժանի են ուշադրութեան: Նա գտնում է, որ առաւել շօշափելի յաջողութիւնների հասել են լեռնային զանգուածներում ապրող հայերը, որոնց շրջանում պայքարը հարստահարիչների դէմ դարեր շարունակ երբեւէ չի մարել, քանզի այդ վայրերը բնակեցուած են եղել գրեթէ բացառապէս հայերով: Փոխարէնը, դաշտավայրերում, «անծայրածիր, հաղորդակցութեան միջոցներից զուրկ տարածքներում» թուրք եւ մահմեդական ժողովուրդների անմիջական հարեւանութեամբ բնակուող հայերի առջեւ ծառացել են մեծ բարդութիւններ:[53] Ընդհանուր առմամբ, ընդունելի այս մեկնաբանութիւնների հիմնաւորման համար նա յղում է 1862 եւ 1894-1896 թթ. հայկական ազատագրական շարժումների փորձը, որոնց կազմակերպիչները միաւորուել էին՝ հետապնդելով, ըստ նրա դիպուկ եւ հաւաստի բնորոշման, «կառավարութեան պարբերական ապօրինութիւններից» կեղեքուած ժողովրդի իրաւունքները, ինչպէս նաեւ որոշ վայրերում նրան կոտորածներից պաշտպանելու նպատակ:[54]

Ակնյայտ է, որ տուեալ հարցի էութեանը քաջատեղեակ Բարբին հայկական ապստամբական շարժումները պայմանաւորում է բացառապէս հայ ժողովրդի հանդէպ օսմանեան վարչակարգի ի սկզբանէ դրսեւորած անմարդկային վերաբերմունքով եւ դրանք դիտում՝ իբրեւ ժողովրդի գոյատեւման համար մղուող ինքնապաշտպանական մարտեր:

Հարկ է նշել, որ 1915 թ. Վանում հայերի հերոսական ինքնապաշտպանութիւնը երիտթուրք պարագլուխների (Թալէաթ, Ջեւդեթ եւ այլք) կողմից ի սկզբանէ շահարկուել է եւ մեկնաբանուել՝ իբրեւ հայկական «խռովութիւն», որն ինքնաբերաբար թելադրել է այն ճնշելու անհրաժեշտութիւնը, ինչին օսմանեան իշխանութիւնները դիմել են հարկադրաբար: Այս վարկածին հետագայ տասնամեակներում բազում թուրք պատմաբաններ: Ուստի, Վանում հայերի կողմից հարկադրաբար ինքնապաշտպանութեան դիմելու փաստի հիմնաւորմամբ, Բարբին հակահարուած է տալիս վաղուց ի վեր շրջանառութեան մէջ դրուած եւ պատմական իրականութեան հետ որեւէ առնչութիւն չունեցող այս վարկածին:[55]

Ինքնապաշտպանութեան, այն է՝ «մարդասպաններին հարկադրուած դիմադրութեան» կապակցութեամբ առաջադրած իր հայեցակարգի ուղեծրում է Բարբին քննարկում նաեւ հայ կամաւորների գործունէութիւնն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ շեշտը դնելով Արեւելեան Հայաստանում կամաւորական լայնածաւալ շարժման սկզբնաւորման վրայ, որն արդարացիօրէն գնահատում է՝ իբրեւ «ազգային ազատագրական շարժում»[56], արժեւորում կամաւորական խմբերի եւ նրանց «առասպելական» առաջնորդների՝ Անդրանիկի, Քեռու եւ այլոց՝ կովկասեան ռազմաճակատում ռուսական զօրքերին ցուցաբերած մեծ օժանդակութիւնը:[57]

Բարբին մանրամասնօրէն քննարկում է ոչ միայն Միջագետք եւ Սիրիա տեղահանուածների, այլեւ Կովկաս գաղթած հայերի դառը ճակատագիրը եւ ապացուցում, որ նրանցից շուրջ 400.000-ը մահկանացուն կնքել են դեռեւս ճանապարհին, իսկ այն կացութիւնը, որում գտնուել են ցեղասպանութիւնից փրկուածները, բնորոշում է՝ իբրեւ «սարսափելի»[58]:

Բարբին արժեւորում է նաեւ Մեծ եղեռնին առնչուող մի շարք այլ հանգամանքներ: 1915-1916 թթ. հայ բնակչութեան ունեցուածքի կողոպուտի, բռնի կրօնափոխութեան, մարդկանց վաճառքի մասին նրա շարադրանքում հանդիպում ենք սոսկ ցաքուցրիւ տեղեկութիւնների: Յեղասպանութեան տեղեկութիւնների հիմքով Երզրումում հայկական եկեղեցու թալանի փաստը՝ նա պարզաբանում է, որ հայերի ունեցուածքի վաճառքից յետոյ թուրքական պետական գանձարանը (Trésor) բռնագրաւել է դրանից ստացուած եկամուտը:[59] Բռնի կրօնափոխութեան հետ կապուած հեղինակի տեղեկութիւնները եւս սուղ են: Այս հարցի կապակցութեամբ նա խօսքը կենտրոնացնում է Երզրումի եւ Բիթլիսի օրինակների վրայ՝ պարզաբանելով, որ մահուան ճիրաններից փրկուել են միայն այն հայերը (գլխաւորապէս՝ կանայք եւ երեխաներ), որոնք փոխել են կրօնը,[60] թէեւ, ըստ նրա շարադրանքի, անհրաժեշտ ենք գտնում մանրամասնել, որ նա բացայայտօրէն հակադրւում է իրականութեանը չհամապատասխանող՝ Հայոց ցեղասպանութիւն, իբրեւ լոկ կրօնական ակունքներ ունեցող իրադարձութիւն, մեկնաբանող տեսակէտի կողմնակիցներին:

47 Նոյն տեղում, էջ 134: Այդ մասին տե՛ս նաեւ Ռ. Սահակեան, նշ. աշխ., էջ 195:

48 H. Barby, նշ. աշխ., էջ 127, 135

49 Նոյն տեղում, էջ 135-136

50 Տե՛ս Ա.-Դ.Օ, *Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին*, Եր., 1917, էջ 224. Ռ. Սահակեան, նշ. աշխ., էջ 185-252; Տ. Դեւրիկեան, նշ. աշխ., էջ 54-93. **R. H. Kévorkian**, նշ. աշխ., էջ 399-405:

51 **H. Barby**, նշ. աշխ., էջ 134-139

52 Նոյն տեղում, էջ 114

53 Նոյն տեղում, էջ 111-112

54 Նոյն տեղում, էջ 115

55 Այդ մասին մանրամասն տե՛ս Ռ. Սահակեան, նշ. աշխ., էջ 254-266:

56 **H. Barby**, նշ. աշխ., էջ 147

57 Նոյն տեղում, էջ 147-150

58 Նոյն տեղում, էջ 187, 191

59 Նոյն տեղում, էջ 27

60 Նոյն տեղում, էջ 25, 95

© National Library of Armenia

Հիմնուելով իր վարած հետաքննութեան տուեալների վրայ՝ Բարբին 1916 թ. յունիսին արձանագրում է Փոքր Ասիայի բոլոր քաղաքներում ստրկավաճառական շուկաների գոյութեան փաստը, որտեղ «վաճառում են տեղափոխութիւնների ժամանակ թուրքական կամ քրդական հրոսակախմբերի առեւանգած կանանց, երիտասարդ աղջիկների եւ երեխաների»[61]: Ինչպէս տեսնում ենք, ըստ Բարբիի հաղորդած տեղեկութիւնների՝ կարելի է համոզուել, որ Մեծ եղեռնի գործընթացին, ընդհանուր առմամբ, յատուկ են եղել Հայոց ցեղասպանութեան առաջին փուլին բնորոշ հիմնական առանձնայատկութիւնները:

Փոխարէնը, Բարբին վկայում է նաեւ Մեծ եղեռնի որոշ իւրայատկութիւնների մասին: Այս առումով, լայնածաւալ տեղահանութիւններից բացի, նա մատնանշում է նաեւ երիտթուրքերի կողմից ժամանակի տեխնիկայի նուաճումների օգտագործման հանգամանքը, ինչպիսիք են՝ հեռախօսը եւ հեռագիրը՝ նշելով, որ դրանք օժանդակել են կոտորածներին վերաբերող հրամանների արագ հաղորդմանը եւ տարածմանը:[62] Այսպիսով, նա, փաստօրէն, իր նպաստն է բերում Շոայի եզակիութեան տեսութեան կողմնակիցների կռուաններից մէկի հերքմանը, ըստ որի՝ հրէաների բնաջնջման ընթացքում, ի տարբերութիւն այլ ցեղասպանութիւնների, օգտագործուել են տեխնիկայի ժամանակակից նուաճումները: Ըստ այդմ՝ Բարբին, անտարակոյս, հիմնաւորում է մի շարք ցեղասպանագէտների ոչ այնքան համոզիչ այդ փաստարկի կապակցութեամբ՝ ֆրանսիացի ցեղասպանագէտ Բ. Բրիւնետոյի առաջադրած առարկումների իրաւացիութիւնը:[63]

Ինչ վերաբերում է Մեծ եղեռնի կազմակերպիչների հովանաւորների նշանակմանը, Բարբին առանձնայատուկ ուշադրութիւն է դարձնում կայզերական Գերմանիայի հայատեաց դիրքորոշման մանրամասն վերլուծութեան վրայ եւ այն քննարկում երկու՝ պետական քաղաքականութեան, ինչպէս նաեւ Օսմանեան կայսրութեան տարածքում գտնուող գերմանացի սպաների ու զինուորների՝ ցեղասպանութեան գործընթացին ունեցած մասնակցութեան կտրուածքներով:

Բարբին հիմնաւորապէս բացայայտում է արեւմտահայութեան համար վճռական նշանակութիւն ունեցած գերմանական պաշտօնական շրջանների՝ իրենց դաշնակից Թուրքիայի նկատմամբ որդեգրած հովանաւորական քաղաքականութեան էութիւնը:[64] 1915 թ. իրականացուած «սարսափելի յանցանքի» պատասխանատուութիւնը նա բարդում է ոչ միայն թուրքական կառավարութեան, այլեւ հաւասարապէս Գերմանիայի կառավարող շրջանների վրայ,[65] ցաւով ընդգծում, որ ոճրի իրականացումը կանխարգելելու, առաւել եւս այն կասեցնելու համար բաւական կը լինէր Գերմանիայի մէկ քայլը՝ էնվեր փաշային ուղղուած, նրա ներկայացուցիչների գէթ մէկ խօսքը:[66] Դրա փոխարէն, սակայն, ինչպէս կսկիծով հաւաստում է Բարբին, Գերմանիան ոչ միայն ձեռնպահ է մնացել գործնական քայլերի դիմելուց, այլեւ «իր խորհուրդներով օգնել է դահիճներին»[67]:

Բազում փաստերի վկայակոչմամբ նա անարգանքի սիւնին է գամում Օսմանեան կայսրութեան տարբեր բնակավայրերում գտնուող Գերմանիայի պաշտօնական ներկայացուցիչներին, մասնաւորապէս՝ զի-

61 Նոյն տեղում, էջ 82-83

62 Նոյն տեղում, էջ 57

63 Տե՛ս **B. Bruneteau,** *Le siècle des génocides. Violences, massacres et processus génocidaires de l'Arménie au Rwanda*, Paris, 2004, p. 145.

64 **H. Barby,** նշ. աշխ., էջ 3, 81, 207-208

65 Նոյն տեղում, էջ 55, 223

66 Նոյն տեղում, էջ 56

67 Նոյն տեղում

նուորականներին հայերի ոչնչացման մեղսակիցները դառնալու համար: Տրապիզոնի կոտորածների պատասխանատու երիտթուրք պարագլուխներից Նայիլ բէյի հետ մէկտեղ նա համարում է գերմանական սպաներից մէկին եւ Թիֆլիսում Գերմանիայի նախկին հիւպատոս Շուլենբերգին:[68]

Ինչ վերաբերում է գերմանացի սպաների՝ եղեռնին ունեցած մասնակցութեանը, ապա այն, անկասկած, միանշանակ չի եղել, ինչը փաստում է նաեւ հեղինակը: Հիմնուելով նրանցից մէկի օրինակի վրայ, որը 1915 թ. մայիսին Վանում բացայայտօրէն ղեկավարել է թուրքերի գրոհը՝[69] նա մանրամասնում է նաեւ այլոց գրաւած՝ փոքր-ինչ զանազանուող վարքագիծը, որոնք, անմիջականօրէն չմասնակցելով հայկական կոտորածներին, թոյլատրել են դրանց իրականացումը, արգելել Կարմիր Խաչի անձնակազմին օգնութիւն ցուցաբերել տեղահանուած հայերին կամ բաւարարուել հայ աղջիկների առեւանգմամբ:[70]

Ըստ այս փաստերի՝ Բարբին ունեցել է, անտարակոյս, բոլոր իրաւունքները գերմանացիներին անուանելու երիտթուրքերի յանցակիցներ:[71] Եթէ նկատի ունենանք Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայի որդեգրած քաղաքականութեան ընդգծուած հակահայկական բնոյթը, ապա պարզ կը դառնայ, որ հեղինակի խիստ քննադատական մօտեցումը միանգամայն արդարացուած է: Դաշնակցին սատարելու մղումից դրդուած՝ Գերմանիայի ընդգծուած հակահայկական քաղաքականութիւնն, իրօք որ, բացայայտօրէն դրսեւորուել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Հարկ է, սակայն, հաշուի առնել մէկ այլ էական հանգամանք եւս: Բարբիի գիրքը շարադրուել է, երբ Անտանտի տէրութիւնները շարունակում էին պատերազմել Քառեակ դաշինքում ընդգրկուած կենտրոնական տէրութիւնների դէմ: Ուստի հեղինակի անթաքոյց ատելութիւնը Ֆրանսիայի հակառակորդ Գերմանիայի նկատմամբ մասամբ պայմանաւորուած է եղել նաեւ այդ հանգամանքով: Այլապէս, ինչո՞վ է կարելի մեկնաբանել Գերմանիայի պարսաւելի դիրքորոշման անողոք դատապարտման ասպարէզում հեղինակի կողմից անհարկի չափազանցութիւնների տուրք տալու իրողութիւնը: Քննարկելով, օրինակ, Գերմանիայի արեւելեան քաղաքականութեանն առնչուող խնդիրները՝ Բարբին յանիրաւի եզրակացնում է, որ 1915 թ. հայերի ոչնչացման ծրագիրը ծնունդ է առել իբր գերմանական քաղաքական գործիչներից մէկի՝ Ռայխստագում ունեցած ելոյթից: Իրականութեան հետ, ըստ էութեան, որեւէ առնչութիւն չունեցող նման պնդման համար հիմք են ծառայել զանազան պատճառներ: Նախ՝ ըստ նրա հայեցակարգի՝ 1914 թ. ի վեր համաշխարհային տիրապետութեան հաստատմանը հետամուտ Գերմանիան ձգտել է Թուրքիայի տարածքը վերածել «գերմանական ազգի» համար էքսպանսիոն գօտու եւ, ըստ այդմ, հայերի բնաջնջման խնդրում ունեցել է «հզօր քաղաքական շահախնդրութիւն», ինչը նրան դրդել է որդեգրելու Հայաստանն ու Միջագետքն այլ ժողովուրդներով բնակեցնելու քաղաքականութիւն:[72]

Հայոց ցեղասպանութեան իրական պատճառներին առնչուող Բարբիի անկողմնակալ մեկնաբանութիւններին միանգամայն անյարիր նման հետեւութեան պատճառը պայմանաւորուած է, հաւանաբար, նրա բացայայտ հակագերմանական դիրքորոշմամբ: Հակառակ պարագայում,

68 Նոյն տեղում, էջ 53

69 Նոյն տեղում, էջ 138

70 Նոյն տեղում, էջ 28, 34, 73

71 Նոյն տեղում, էջ 30

72 Նոյն տեղում, էջ 15, 208

© National Library of Armenia

բացայայտելով երիտթուրքերի՝ իբրեւ Աբդուլ Համիդի հայատեաց քաղաքականութեան ընդամէնը շարունակողների դիմագիծը, զանազան փաստերի թուարկմամբ հիմնաւորապէս ապացուցելով 1915 թ. Մեծ եղեռնի իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով՝ նա ձեռնպահ կը մնար նման չափազանցուած եզրայանգումից: Իրականում, երիտթուրքերի որդեգրած՝ հայ ժողովրդի լայնածաւալ բնաջնջման քաղաքականութիւնն առնչւում էր նրանց պանթուրքական ծրագրերի իրականացմանը, ինչը կարող էր միայն անուղղակիօրէն համահունչ լինել Գերմանիայի որդեգրած արտաքին քաղաքականութեան միտուածութեանն Արեւելքում:

Առաջին համաշխարհային պատերազմում ընդգրկուած եւրոպական տէրութիւնների՝ հայ ժողովրդի հանդէպ վարած քաղաքականութեան մեկնաբանման հարցում Բարբիի մօտեցումն ընդգրկուն չէ, քանզի այն, ըստ էութեան, սահմանափակւում է միայն Գերմանիայի քաղաքականութեան վերլուծութեամբ: Ինչ վերաբերում է Մեծ եղեռնի իրականացման ընթացքում այլ պետութիւնների, այդ թւում Ֆրանսիայի՝ արեւմտահայութեան հանդէպ անտարբեր դիրքորոշման քննարկմանը, ապա Բարբին ձեռնպահ է մնում այդ ուղղութեամբ փոքր-իսկ ջանքեր գործադրելուց եւ պահպանում է զրեթէ կատարեալ լռութիւն: Կուրացած Ֆրանսիայի ախոյեանի հանդէպ ատելութեամբ՝ նա, հաւանաբար, նման նպատակ նոյնիսկ չի հետապնդել, ինչի հետեւանքով անկարող է եղել եւրոպական տէրութիւնների քաղաքականութեան պատկերը ներկայացնել իր ամբողջութեան մէջ, ինչն անվարանօրէն հարկ է համարել նրա մօտեցման ամենաակնառու թերութիւնը:

Առանց տէրութիւնների անկարեկից վերաբերմունքի պատճառների, ինչպէս նաեւ ոչ ի նպաստ արեւմտահայութեան իրականացրած նրանց քաղաքականութեան վերլուծութեան, Բարբին սահմանափակւում է սոսկ հպանցիկ յիշատակմամբ այն մասին, որ հայ ժողովրդի ճիչը երբեւէ չի յարուցել Բեռլինի պայմանագիրը ստորագրած երկրների «յիրաւի արդիւնաւէտ միջամտութիւնը»[73]: Այս առումով նկատենք, որ թէեւ նրա ընդգծուած հակագերմանական դիրքորոշումը նոր երեւոյթ է Հայոց ցեղասպանութեան ֆրանսիական պատմագրութեան ոլորտում, ինչը բնորոշ էէ ԺԹ դարի վերջի եւ Ի դարի սկզբի ֆրանսիացի պատմաբաններին, այդուհանդերձ, այս կարեւոր հարցի շուրջ նրա միակողմանի մօտեցումը մեծապէս զիջում է նախորդ շրջանի ֆրանսիական պատմագիտական մտքի նուաճումներին, քանզի նրա նախորդներից շատերը խիստ քննադատութեան են ենթարկել հաւասարապէս եւրոպական բոլոր մեծ տէրութիւնների, այդ թւում Ֆրանսիայի քաղաքականութիւնը Հայկական հարցում:[74]

Ամէն դէպքում, Բարբին կասկած իսկ չի տածում, որ իր գիրքը կը նպաստի Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչների դատապարտմանը քաղաքակիրթ միջազգային հանրութեան կողմից. «Ես վերարտադրեցի այս պատմութիւնները, չնայած դրանց սարսափելիութեանը: Նման փաստերը չպէտք է մնան փակի տակ: Հարկ է դրանք հրապարակել, որպէսզի քաղաքակիրթ աշխարհը, պատմութիւնը դատապարտեն մեղաւորներին»,– գրում է նա:[75]

Փակուղուց ելնելու միակ ելքը Բարբին տեսնում է ի դէմս հայ ժողովրդին՝ Անտանտի տէրութիւնների հովանու եւ ե-

73 Նոյն տեղում, էջ 224

74 Այդ մասին տե՛ս **Վ. Պողոսեան**, *Հայոց ցեղասպանութեան առաջին փուլը ֆրանսիական պատմագրութեան եւ հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ)*, Եր., 2005:

75 **H. Barby**, նշ. աշխ., էջ 202

բաշխիքների ներքոյ ինքնավարութիւն յատկացնելու, ինչը համարում է «միակ ընդունելի վճիռը» եւ հայ ժողովրդի ազատագրումը դասում դաշնակիցների առջեւ ծառացած հիմնական խնդիրների շարքում, որին հարկ կը լինի լուծում տալ յաղթանակից յետոյ:[76]

Նշենք, որ Բարբին չի մեկնաբանում որոշ էական հանգամանքներ, ինչպիսիք են՝ Մեծ եղեռնի իրականացումը թուրքիզմի գաղափարախօսութեան հիման վրայ, ի տարբերութիւն Հայոց ցեղասպանութեան առաջին փուլի պարագայի, երբ մանրամասնում է պանիսլամիզմի «ընդարձակ ծրագրի» որդեգրումը Աբդուլ Համիդի կողմից,[77] եւ կամ համիդեան վարչակարգի սկզբնաւորած հայաջինջ քաղաքականութիւնը գագաթնակէտին հասցնելու համար այն լայն հնարաւորութիւնների առկայութիւնը, որոնք երիտթուրքերին ընձեռել էր Առաջին համաշխարհային պատերազմը:

Այդուհանդերձ, չնայած որոշ բացթողումներին, հակասական մեկնաբանութիւններին եւ անգամ ծայրայեղութիւններին, որոնց վրայ կանգ առանք, հաղորդած տեղեկութիւնների անկողմնակալութեան եւ հաւաստիութեան առումով Բարբիի գիրքն, անկասկած, դասւում է Մեծ եղեռնի կարեւորագոյն սկզբնաղբիւրների թւում: Այն երիտթուրքական վարչակարգի քաղաքականութեան իրական դիմագիծը հիմնաւորապէս բացայայտող, հաւաստի փաստերի վրայ հիմնուած մեղադրական է: «Այն ամէնը,– գրում է նա,– ինչ ես հաղորդում եմ այս ողբերգական հետաքննութեան ընթացքում, սարսափի եւ մահուան տեսարանները, որոնց մասին պատմում եմ, այս ամէնն անհերքելի են: Ես ձեռքի տակ ունեմ բոլոր փաստերն այն մասին, ինչ գրում եմ: Թուրքական կառավարութիւնը չի կարող ժխտել իր յանցանքը, որը ո՛չ ռազմական եւ ո՛չ ռազմավարական որեւէ պատճառով չի կարող հիմնաւորուել»[78]:

Ինչպէս նշեցինք, Բարբիի աշխատութիւնն օգնում է կողմնորոշուելու Մեծ եղեռնին առնչուող զանազան սկզբունքային հարցերում, հուժկու հակահարուած տալիս թուրք պատմաբանների որոշ հատալիս թուրք պատմաբանների որոշ հատալիս թուրք պատմաբանների եւ նպաստում նրանց կեղծիքների մերկացմանը: Այս առումով յատկանշական է Բարբիի՝ իր աշխատանքին տուած գնահատականը. «Ժուրնալի» կողմից ուղարկուելով իրադարձութեան վայր, ես հաւաստել եմ ճշմարտութիւնը, տեսել եմ եւ անվարանօրէն հաղորդել փաստեր, որոնք բացայայտուել են իմ հետաքննութեան շնորհիւ: Ես նոյնիսկ պնդում եմ, որ իրականութեան մասին ամէն ինչ էէ, որ հաղորդել եմ, քանզի, իրօք որ, կան որոշ սարսափներ, որոնք հնարաւոր էէ մանրամասնօրէն նկարագրել»[79]: Ըստ այդմ՝ բուն եղեռնի իրականացմանն առնչուող զանազան խնդիրներում գոյների խտացման կամ կողմնակալութեան մէջ հեղինակին յանդիմանելու հաւանականութիւնն խպառ բացառւում է:

76 Նոյն տեղում, էջ 224, 226

77 Նոյն տեղում, էջ 7

78 Նոյն տեղում, էջ 60-61

79 Նոյն տեղում, էջ 213

© National Library of Armenia